

ԲԱՐԵԿԱՄ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻՆԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝
ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Որքան քիչ են անոնք, որ կը հասկնան՝ թէ ի՞նչ կը նշանակէ ատով հրապուրուիլ: Այդ մասին կարելի է դատել Շլեկիի մանկատան տնօրէնուհին նամակէն. «Տասնչորս տարեկան տղու մը ձեռքերը ծածկուած էին գորտնուկներով: Բազմաթիւ միջոցներ փորձեցին անոնցմէ ազատելու համար, բայց ապարդիւն: Եւ ահա կին մը փոքրիկին գաղտնի միջոց մը սորվեցուցեր էր.՝ Նորայրուհին ժամանակ պէտք էր ձեռքերը շփէր եւ ըսէր. Ինչ որ կը տեսնեմ՝ թող ընէ, ինչ որ կը չփեմ՝ թող անհետանայ: Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի: Կինը զգուշացուցեր էր տղան, որ ոեւէ մէկուն չպատմէ: Ես այդ մասին բնաւ չէի գիտնար, եթէ չնկատէի՝ որ գորտնուկները անհետացեր են: Հարցուցի, թէ ի՞նչ եղաւ, չպատասխանեց: Միայն ժամանակ մը ետք ամէն ինչ պատմեց»:

Կին մը կը գրէ. «Արդէն երկու տարի կ'ընէ, որ գտեր եմ իմ Փրկիչս: Բայց հաւատքս չ'աւելնար: Կը կարծեմ, որ կախարդութեան մեղքի հետեւանք է: Երիտասարդ ժամանակս գորտնուկներու համար հմայողներուն եւ խաղաթուղթով բախտ բացողներուն դիմեր եմ»:

Ուրիշ մը կը գրէ. «Ես ինքս ալ կախարդութեամբ կը զբաղէի...

Շարունակելի

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԵՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՕ ՃԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 18 ՄԱՐՏ, 2012

ԹԻՒ 12

ՅԻՍՈՒՍ ԵՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ

17.20 - 18.14

Ե. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԴԱՏԱԻՈՐԻ

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծո՞մէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծո՞մէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէ՛ք թէ ի՞նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որ գիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր, եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս,՝ ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԸ

Քառասուն Մանկանց տօնը կը յիշատակուի Կապաղովկիոյ հռովմէական գորագունդին պատկանող Քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (Մանուկ գրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ո՛չ մեր հասկացողութեամբ երեխայ): Թէեւ հաստատուած է թէ հաւատքով քրիստոնեայ այս 40 երիտասարդները ինչ ազգութեան կը պատկանին, բայց հայ ժողովուրդը անոնց հաւաքական նահատակութիւնը կը սրբագործէ ու արժանի կը դարձնէ հանդիսաւոր կրօնական տօնախմբութեանց եւ ժողովրդական յիշատակութեան:

Հռովմէական բանակէն ներս խիստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիններուն քրիստոնեայ ըլլալը: Մի քանի անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ հին աստուածներուն թէ ոչ ենթարկուիլ հաշուեյարդարի: Երիտասարդները, համարձակախօս եւ անդրդուելի, կը յայտնեն թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սեբաստիոյ թագաւորին, սակայն ուխտ ունին նաեւ անխախտ պահելու իրենց երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը, որ իրենց համար կենսական է, աղբիւր է յոյսի, խանդավառութեան եւ քաջութեան: Իբրեւ պատիժ այս ընդդիմախօսութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ: Նոյն ատեն կը յայտարարուի թէ եթէ անոնք յանկարծ դարձ գործեն դէպի հին աստուածները, լիճին ափին իրենց տրամադրութեան տակ կայ բաղնիք եւ ջուր:

Քառասուն քաջ երիտասարդները հաւատքի գորութեամբ կ'որոշեն ընդունիլ իրենց վերապահուած ճակատագիրը: Անոնցմէ մէկը միայն, չզիմանալով այս մահին, կը վազէ սառած ջուրէն դուրս, սակայն տաք ջուրին հազիւ դպած, յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած 39-ը կը մնան անդրդուելի: Գիշերով, յանկարծ երկնային լոյս մը կը ճառագայթէ լիճին վրայ ու լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, անմիջապէս դարձի կու գայ ու կը յայտարարէ թէ ինք կը դառնայ Քրիստոնեայ, անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուններորդ գինուորը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՂՁՈՅՆՆԵՐ

- Սուրբ Ծնունդի առթիւ . -**
 - Զրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ:
 - Ձեզի մեզի մեծ Աւետիս:
- Սուրբ Յարութեան Տօնին . -**
 - Զրիստոս յարեաւ ի մեռելոց:
 - Օրհնեալ է յարութիւնը Զրիստոսի:
- Սուրբ Պատարագի Ժամանակ .-**
 - Զրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ:
 - Օրհնեալ է յայտնութիւնը Զրիստոսի:
- Ս. Հաղորդութիւն ստանալու Ժամանակ .-**
 - Նախ խաչակնքել, ապա «Մեղայ Աստուծոյ» ըսել:

Տէրը իմ լոյսս եւ փրկութիւնս է, եւ որմէ՞ պիտի վախնամ. Տէրը իմ կեանքիս ապաւենն է, եւ որմէ՞ պիտի դողամ: (Մաղմոս 27.1)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է վարդապետութիւնը:
 Վարդապետութիւնը մեր Եկեղեցւոյ մէջ ձեռնադրութեամբ տրուած պաշտօն մըն է ա՛յն կուսակրօն քահանաներուն, որոնք պէտք է ըլլան իրապէս եւ բարձրօրէն ուսեալ. վասնզի անոնց պաշտօնն է քարոզել, Սուրբ Գիրքը մեկնել, բացատրել Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը եւ ուսուցանել: Արդէն՝ Վարդապետ կը նշանակէ ուսուցիչ, հո՛ս մանաւանդ կրօնական իմաստով:

Վարդապետական աստիճան կրնան տալ ա՛յն եպիսկոպոսները, որոնք ստացած են արդէն այդ աստիճանը: Հին ժամանակ ամէն եպիսկոպոս չունէր վարդապետական աստիճան, ասոր համար վարդապետ-եպիսկոպոս մը միայն կրնայ տալ վարդապետութեան աստիճան: Ասոր հակառակ, ծայրագոյն վարդապետ մը, որ եպիսկոպոսական աստիճան չ'ունի, կրնայ տալ վարդապետական աստիճանը: Իսկ այն եպիսկոպոսները, որ չունին վարդապետական աստիճան, եպիսկոպոս ձեռնադրուելէ ետքը կը ստանան զայն:

Վարդապետութիւնը աստիճաններ ունի, անոնք տասնչորս աստիճան են, որուն առաջին չորսը Մասնաւոր Վարդապետի աստիճանն է, իսկ մնացած մասը Մեծ կամ Ծայրագոյն Վարդապետի աստիճան: Վարդապետական աստիճանին խորհրդանշանն է օձագլուխ կամ խաչաձեւ գաւազանը:

Բուն վարդապետները ծայրագոյններն են, որոնք մեծ հեղինակութիւն կամ իշխանութիւն կը վայելին Եկեղեցւոյ մէջ:

Շարունակելի

ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ ԵՐՐ. 12.2

Երբ Տէր Յիսուսի մտերմօրէն նայելէ վերջ աշխարհի կը նայինք, աշխարհը մեզի համար բոլորովին տարբեր երեւոյթ մը կ'առնէ: Անանկ կը թուի, թէ Անոր նայած ատեն իր աչքերուն լոյսէն մեր աչքերուն կ'անցնի եւ մենք այնուհետեւ մեր շրջապատը իր լոյսով կը տեսնենք: Կը յիշե՞ս, թէ երբ մանուկ էիր ի՞նչպէս կը փորձէիր շեշտակի արեւին նայիլ ակնթարթ: Բայց երբ նայուածքդ արեւէն դարձնելով շուրջդ դիտեցիր, ամէն բան փոխուած կը տեսնէիր: Ամէն բան արեւին լոյսովը ծածկուած էր ու կարծես ամէն բանին վրայ արեւէն առնուած շրջանակ մը կը գեղեցկացնէր ամենէն տղեղ առարկաներն անգամ: Քու նայուածքդ արեւի լոյսէն լոյս առած էր ու ամէն ինչ փոխուած ու գեղեցկացած:

Պօղոս Առաքեալ Դամասկոսի ճամբուն վրայ Տիրոջ դէմքին լոյսը տեսնելէն վերջ անոր բոլոր հին տեսութիւններն ու մտայնութիւնները փոխուած էին: Կորսնցուցած էր աշխարհի իր բոլոր հրապոյրները: Ու այն տառապանքները, հալածանքներն ու չարչարանքները՝ որոնք կրեց իր կեանքին մէջ, մինչեւ իր մահը աննշան կ'երեւէին որովհետեւ անոնք ծածկուած էին Տէր Յիսուսի դէմքէն առած լոյսովը: Ամէն բանի, նոյնիսկ իր չարչարանքներուն վրայ երկնային լուսապսակ մը կը հանգչէր:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ

65.8-25

Տէրը այսպէս կ'ըսէ.-

«Այնպէս ինչպէս երբ ողկոյգին վրայ խաղողի ճիւղ մը մնացած ըլլայ՝ կ'ըսեն. «Մի նետեր ողկոյգը, որովհետեւ անոր վրայ Տիրոջ օրհնութիւնը կայ», այնպէս ալ ես իմ ծառայիս սիրոյն պիտի խնայեմ եւ կորուստի պիտի չմատնեմ բոլորը:

Յակոբի որդի Յուզայէն սերունդ մը պիտի հանեմ որ իմ սուրբ լեռս պիտի ժառանգէ. իմ ընտրեալներս զայն պիտի ժառանգեն եւ իմ ծառաներս այնտեղ պիտի բնակին:

Զիս փնտռող ժողովուրդիս համար Սարոնը հօտերու արօտավայր պիտի ըլլայ եւ Աքորի ձորը՝ նախիրներու հանգստավայր:

Իսկ ձեզ՝ որ զիս թողուցիք, իմ սուրբ լեռս մոռցաք, Բախտի կուռքին սեղան կանգնեցիք եւ Ճակատագրի չաստուծոյն գինի ընծայեցիք, ձեզ սուրի պիտի մատնեմ եւ բոլորդ պիտի կոտորուիք, որովհետեւ կանչեցի ձեզ եւ չլսեցիք, խօսեցայ եւ մտիկ չըրիք: Ըրիք այն ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցիք այն ինչ որ կամբքիս հակառակ է»:

Ուստի այսպէս կ'ըսէ Տէրը.- «Ահաւասիկ, ինծի ծառայողները պիտի կշտանան, մինչ դուք անօթի պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի յագենան, մինչ դուք ծարաւ պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի ուրախանան, մինչ դուք ամօթով պիտի մնաք. ինծի ծառայողները սիրտի ուրախութեամբ պիտի ցնծան, իսկ դուք ձեր սիրտին ցաւէն պիտի ազադակէք, անյոյս հոգիով պիտի ողբաք, որովհետեւ իմ ընտրեալներս նգովքի տեղ ձեր անունը պիտի գործածեն, եւ ես՝ Տէրս ձեզ մահուան պիտի մատնեմ: Մինչդեռ իմ ծառաներուս պիտի տամ նոր անուն մը, որպէս երկրի վրայ այդ անունը օրհնողը ճշմարիտ Աստուածը օրհնած ըլլայ, երկրի վրայ անով երգում ընողը ճշմարիտ Աստուծոյ վրայ երգուած ըլլայ: Արդարեւ, իմ ընտրեալներս պիտի մոռնան իրենց կրած նեղութիւնները, եւ ա՛լ երբեք պիտի չյիշեն զանոնք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ՓԻԼԻՊՊԵՅԻՆԵՐՈՒՆ

3.1- 4.9

Հետեւաբար, եղբայրներ, Տիրոջմով ուրախացէք: Նոյն բաները գրելը ինծի համար ձանձրոյթ չէ, բայց ձեզ ճշմարտութեան մէջ կը հաստատէ:

Զգուշացէ՛ք այն մարդոցմէ, այն շուներէն, որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ թլփատուիք: Իսկական թլփատուածները մենք ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք եւ Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով միայն կը պարծենանք, եւ ոչ թէ՛ Օրէնքի գործունէութեամբ կամ Աբրահամի մարմնաւոր զաւակը ըլլալով: Եթէ անոնք բաւարար ըլլային փրկելու համար, ինծի ոչինչ պիտի պակսէր. եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ թէ՛ մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, ես աւելիով կրնամ, քանի ութօրեայ թլփատուած իսրայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն, գտարիւն եբրայեցի եւ օրինապահ փարիսեցի: Այնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի. եւ արդար էի այնքան՝ որքան օրէնքի անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար: Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ՝ համեմատած այն գերազանց շահին հետ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնալն է: Այդ գիտութիւնը ունենալու համար ամէն ինչ թողուցի, ոչնչութիւն սեպելով, որպէսզի Քրիստոսը շահիմ, եւ կատարելապէս անոր միանամ:

Շարունակել ընթերցել Աւետարանէն (Նոր Կտակարան)